Հարց 1

Համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները ո՞ր իրավական ակտերով են կարգավորվում.

ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերով:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 2

Ո՞ր մարմինն է քննության առնում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի հրապարակված արդյունքների վերաբերյալ գրավոր բողոքը.

ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 3

Ի՞նչը չի ներառվում պաշտոնի նկարագրության մեջ պաշտոնի դիրքը ամրագրելիս.

տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:

(«Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 23.12.2025թ. թիվ 38-Ն հրամանի հավելվածի կետ 8)

Հարց 4

Ի՞նչ խմբերի են բաժանվում կոմպետենցիաները.

ընդհանրական և ընտրանքային:

(«Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 23.12.2025թ. թիվ 38-Ն հրամանի հավելվածի կետ 12)

Հարց 5

Համայնքային ծառայությունը՝

մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

(«Հանրային ծառայության մասին» օրենք , հոդված 3, մաս 4)

Հարց 6

Ի՞նչ է ներառում բարեվարքության համակարգը.

հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

(«Հանրային ծառայության մասին» օրենք, հոդված 21, մաս 1)

Հարց 7

Նշվածներից ո՞րը վարքագծի սկզբունք չէ.

անաչառությունը:

(«Հանրային ծառայության մասին» օրենք, հոդված 22, մաս 1)

Հարց 8

Նշվածներից ո՞ր դասային աստիճանն է շնորհվում համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին.

ՀՀ համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 9

Ե՞րբ է շնորհվում գլխավոր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճանը.

կարող է շնորհվել ոչ շուտ, քան համայնքային ծառայության տվյալ խմբի տվյալ ենթախմբի պաշտոնը՝ սույն օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանով, երեք տարի անընդմեջ զբաղեցնելուց հետո:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 10

Ի՞նչ կարգով կարող է մեկ աստիճանով իջեցվել համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճանը.

միայն որպես «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգապահական տույժի կիրառում:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 11

Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա ո՞վ է հաստատում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը.

համապատասխան համայնքի ղեկավարը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 12

Ե՞րբ կարող է փոփոխվել համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը.

եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստումից հետո:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 13

Նշվածներից ո՞վ իրավունք չունի զբաղեցնել համայնքային ծառայության պաշտոն.

այն անձը, որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 12)

Հարց 14

Նշվածներից ովքե՞ր չեն ընդգրկվում 3500-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի համար ձևավորվող հանձնաժողովի կազմում .

գիտական և ուսումնական հաստատությունների երկու ներկայացուցիչներ:

(«Համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգը հաստատելու մասինե ՀՀ ՏԿԵՆ 23.12.2025թ. թիվ 40-Ն հրամանի հավելվածի կետ 10)

Հարց 15

Նշվածներից ո՞վ է իրականացնում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները.

համայնքապետարանի աշխատակազմը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 16

Օրենքով սահմանված կարգով ո՞վ է իրավասու անձին չթույլատրել մասնակցելու համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին.

մրցութային հանձնաժողովը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 17

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի միջոցով յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները բալային ի՞նչ համակարգով է գնահատում և ո՞րն է նվազագույն դրական գնահատականը.

5 բալային համակարգով և նվազագույն դրական գնահատականը 3 բալն է։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 18

Ի՞նչ ժամկետում և ինչպե՞ս է անցկացվում կրկնակի մրցույթը.

10-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 19

Մրցույթում հաղթող ճանաչված անձանցից ո՞վ է պաշտոնում նշանակում համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբում.

համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 20

Ո՞ր մարմինն է սահմանում ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը.

ՀՀ կառավարությունը։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 21

Ի՞նչ պարբերականությամբ է անցկացվում համայնքային ծառայողի պարտադիր վերապատրաստումը.

առնվազն երեք տարին մեկ։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 22

Ի՞նչ հիմքով է անցկացվում համայնքային ծառայողի արտահերթ ատեստավորումը.

1) նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 23

Ո՞ր դեպքում է համայնքային ծառայողին արգելվում համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) հետ.

եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 24

Նշվածներից ի՞նչ կարգով են լուծվում համայնքային ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը.

համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 36)

Հարց 25

Ո՞ր դեպքում կարող է նախատեսվել ստորաբաժանման պետի տեղակալի համայնքային ծառայության պաշտոնը:

առնվազն ութ համայնքային ծառայողներից բաղկացած ստորաբաժանումներում:

(«Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 08.12.2025թ. թիվ 33-ն հրամանի կետ 4)

Հարց 26

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքի և հաստիքացուցակի հետ կապված առանձնահատկությունները որոշում է.

Երևանի ավագանին:

(«Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 08.12.2025թ. թիվ 33-Ն հրամանի կետ 6)

Հարց 27

Երբ հանձնաժողովի որևէ անդամի, այդ թվում՝ նախագահի, մասնակցության անհնարինության հետևանքով չի_ապահովվում հանձնաժողովի քվորում, ինչի արդյունքում դառնում է անհնար հանձնաժողովի հետագա գործունեությունը, հանձնաժողովը ի՞նչ որոշում է կայացնում՝

մրցույթը հաջորդ օրը շարունակելու վերաբերյալ:

(«Համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 23.12.2025թ. թիվ 40-Ն հրամանի հավելվածի կետ 27)

Հարց 28

Մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ ու՞մ կողմից կարող է արտամրցութային կարգով զբաղեցվել համայնքային ծառայության թափուր պաշտոնը.

համայնքային ծառայության կադրերի ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձի կողմից:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.1)

Հարց 29

Ու՞մ վրա են տարածվում համայնքի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

համայնքի աշխատակազմի բոլոր աշխատողների վրա:

(«Հայաստանի Հանրապետության համայնքների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 30.09.2024թ. թիվ 11-Ն հրամանի հավելվածի կետ 2)

Հարց 30

Աշխատակազմի համայնքային ծառայողը ի՞նչ ժամկետում է պարտավոր իր անմիջական ղեկավարին ներկայացնել հաշվետվություն տվյալ կիսամյակում իր կատարած աշխատանքների մասին.

յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում:

(«Հայաստանի Հանրապետության համայնքների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՏԿԵՆ 30.09.2024թ. թիվ 11-Ն հրամանի հավելվածի կետ 33)

Հարց 31

Համայնքային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համայնքային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշումը ի՞նչ ժամկետում է ընդունում.

նրա աշխատանքի ներկայանալու օրվանից՝ աշխատանքային երեք օրվա ընթացքում:

(«Համայնքային ծառայության ատեստավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ ՏԿՀՆ 11.09.06թ. թիվ 15-ն հրամանի հավելվածի կետ 81)

Հարց 32

Ո՞վ է անցկացնում ծառայողական քննությունը.

ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն իր աշխատակազմի միջոցով, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև իր կողմից ստեղծված աշխատանքային խմբի միջոցով, որում կարող են ընդգրկվել նաև ներկայացուցիչներ համապատասխան տարածքային կառավարման մարմնից։

(«Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ՏԿՀՆ 13.07.06թ. թիվ 1003-ն որոշման հավելվածի կետ 12)

Հարց 33

Ու՞մ կողմից ընդունված իրավական ակտով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում համայնքային ծառայողը մինչև մեկ տարի ժամկետով կարող է շարունակել զբաղեցնել իր պաշտոնը.

տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 34)

Հարց 34

Քաղաքացիական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակելու հետ միաժամանակ ի՞նչ դասային աստիճան է շնորհվում.

համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 35

Նշվածներից ո՞ր հիմքով է լուծվում համայնքային ծառայության պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնելու համար անձի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը.

համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից։

(ՀՀ կառավարության 13.07.2006թ.-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետ)

Հարց 36

Ծառայողական քննությունը ցանկացած փուլում դադարեցվում է, եթե.

կողմերն իրենց ներկայացրած դիմումից (հաղորդումից) հրաժարվելու վերաբերյալ գրավոր դիմում են ներկայացնում լիազորված մարմին։

(«Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 13.07.06թ. թիվ 1003-ն որոշման հավելվածի կետ 49)

Հարց 37

Ի՞նչ ժամկետով փորձաշրջան է սահմանվում քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնում առաջին անգամ նշանակման դեպքում.

փորձաշրջան չի սահմանվում։

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված)

Հարց 38

Համայնքային ծառայողի ատեստավորման թեստավորման փուլի արդյունքների վերաբերյալ բողոքը ու՞մ է ներկայացվում.

ատեստավորման հանձնաժողովին։

(«Համայնքային ծառայության ատեստավորման կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 11.09.06թ. թիվ 15-ն հրամանի հավելվածի կետ 60)

Հարց 39

Ծառայողական քննությունն անցկացվում է քննություն անցկացնելու մասին լիազորված մարմնի աշխատակազմի ղեկավարի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

մեկամսյա ժամկետում:

(«Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 13.07.06թ. թիվ 1003-ն որոշման հավելվածի կետ 35)

Հարց 40

Համայնքային ծառայողն իրավունք չունի՝

անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 41

Կադրերի ռեզերվում գրանցվելու համար ,Համայնքային ծառայության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածում սահմանված հիմքերից որևէ մեկի ի հայտ գալուց հետո անձը ի՞նչ ժամկետում կարող է դիմում ներկայացնել կադրերի ռեզերվում գրանցվելու համար.

համապատասխան հիմքի ի հայտ գալու օրվանից հետո՝ աշխատանքային 5 օրվա ընթացքում:

(«Համայնքային ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու և
կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿԵՆ 18.11.2025թ. թիվ 29-ն հրամանի հավելվածի կետ 9)

Հարց 42

Որքա՞ն է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը.

մեկ տարի.

(«Համայնքային ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿԵՆ 18.11.2025թ. թիվ 29-ն հրամանի հավելվածի կետ 9)

Հարց 43

Ո՞ր դեպքում է համայնքային ծառայության առաջատար խմբի երկրորդ և երրորդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր խմբի պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում տվյալ համայնքի ղեկավարը.

աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր, այդ թվում՝ ժամանակավոր թափուր լինելու և պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի բացակայության կամ աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցված չլինելու դեպքում:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 44

Մրցույթի արդյունքների բողոքարկման դեպքում ո՞ր որոշումներից մեկն է ընդունում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը.

ա. կոնկրետ մասնակցի՝ մրցույթում հաղթող ճանաչելու մասին,

բ. հարցազրույցի փուլը սահմանված կարգի խախտմամբ անցկացված լինելու դեպքում՝ նոր հարցազրույցի փուլ անցկացնելու մասին:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 45

Ի՞նչ ժամկետում կարող է արտամրցութային կարգով զբաղեցվել համայնքային ծառայության թափուր պաշտոնը (բացառությամբ աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև նոր ստեղծված համայնքային ծառայության պաշտոնների).

մեկշաբաթյա ժամկետում, մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.1)

Հարց 46

Համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում ո՞ր պաշտոնները չեն կարող զբաղեցվել արտամրցութային կարգով.

աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև նոր ստեղծված համայնքային ծառայության պաշտոնները:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.1)

Հարց 47

Ո՞ր դեպքում է համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում նաև համայնքային ծառայողի մասնագիտական աշխատանքային ստաժում.

եթե այն համապատասխանում է ստացած բարձրագույն կրթությանը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

Հարց 48

Ատեստավորման ենթակա չեն.

տվյալ պաշտոնը երեք տարուց պակաս ժամկետով զբաղեցնող համայնքային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 49

Համայնքային ծառայողն իրավունք չունի.

լինել նույն համայնքի ավագանու անդամ:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 50

Մինչև կարգապահական տույժ նշանակելը ի՞նչ պետք է պահանջի կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը.

պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված համայնքային ծառայողից:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 32)

Հարց 51

Ո՞րն է համարվում համայնքային ծառայողին պաշտոնից ազատման հիմք.

«խիստ նկատողություն» կարգապահական տույժի կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական խախտում թույլ տալու հիմքով «համայնքային ծառայողին նույն պաշտոնում աշխատելու ժամանակահատվածում շնորհված ավելի բարձր դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» տույժի կիրառումը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 52

Ո՞րն է համարվում համայնքային ծառայողին պաշտոնից ազատման հիմք.

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը:

(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 53

Որո՞նք են համայնքային վարչական պաշտոնները.

Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները:

(«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 54

Ի՞նչ խմբերի է դասակարգվում հանրային պաշտոնը.

պետական և համայնքային:

(«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4)